

## Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

410 **հունվար** 30 Ծնվեց միջնադարյան պատմագրության ներկայացուցիչ Մովսես Խորենացին:  
451 **մայիս** 26 Ավարայրի ճակատամարտը՝ Վարդանանց հերոսամարտը:  
**մայիս** 26 Քիստոնեական հավատքի համար Ջորդաստրիան պարսիկների դեմ մղվող պայքարում վախճանվեց Վարդան Մամիկոնյանը:  
535 **հուլիս** 23 Հուստինիանոս կայսեր էդիկտը հայոց ժառանգական իրավունքի մասին:  
554 **մարտ** 29 Դվինում գումարված եկեղեցական ժողովը դատապարտում է քաղկեդոնական դավանանքը և վերջնականապես խզում իր կապերը բյուզանդական «տիեզերական» եկեղեցու հետ:  
570 **սեպտեմբեր** 1 Կնքվում է հայ-բյուզանդական դաշինքը:  
640 **հոկտեմբեր** 6 Դվինի գրավումը և կողոպուտը արաբների կողմից:  
775 **ապրիլ** 15 ճակատամարտ Արձեշի մերձակայքում:  
**ապրիլ** 24 Սկսվեց Արձնի (Բագրևանդ) ճակատամարտը:  
951 **մայիս** 7 Ծնվեց հայ բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ Գրիգոր Նարեկացին: (Վախճ. 1003թ.-ին):  
1100 **հունիս** 4 Ծնվեց հայ բանաստեղծ, մատենագիր Ներսես Շնորհալին: (Վախճ. 1173թ.-ին):  
1250 **հունիս** 12 Ծնվեց հայ ականավոր առակաբան-քարոզիչ Վարդան Այգեկցին:  
1280 **հոկտեմբեր** 14 Գլածորի համալսարանի հիմնադրումը:  
1346 **դեկտեմբեր** 27 Ծնվեց հայ փիլիսոփա, հասարակական-եկեղեցական գործիչ Գրիգոր Տաթևացին: (Վախճ. 1409թ.-ին):  
1386 **ապրիլ** 13 Լենկ-Թեմուրի զորքը գրավում է Թավրիզը, ապա մտնում Սյունիք, գրավում Նախիջևանը, պաշարում Երնջակի բերդը, ասպատակում Մեծ ու Փոքր Սյունիքները և Այրարատը:  
1387 **սեպտեմբեր** 1 Լենկ-Թեմուրի զորքը պաշարում է և գրավում Վանի բերդը:  
**հոկտեմբեր** 1 Երկու տարի Հայաստանը ասպատակելուց հետո Լենկ-Թեմուրը վերադառնում է Սամարղանդ:  
1396 **ապրիլ** 1 Լենկ-Թեմուրը Ալանաց դռով վերադառնում է Անդրկովկաս:  
1399 **սեպտեմբեր** 13 Լենկ-Թեմուրը սկսում է իր երրորդ արշավանքը դեպի Հայաստան և մինչև 1403 թ. նվաճում ողջ Անդրկովկասը, Փոքր Ասիան, Սիջազետը:  
1402 **հուլիս** 10 Լենկ-Թեմուրը պարտության է մատնում սուլթան Բայազետին և գերի վերցնում նրան:  
1405 **փետրվար** 13 70-ամյա հասակում մեռնում է Լենկ-Թեմուրը:  
1421 **օգոստոս** 21 Բագրևանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կարա-կոյունլուները պարտություն են կրում:  
1493 **մայիս** 29 Թուրքերը գրավում են Կոստանդնուպոլիսը:  
1496 **դեկտեմբեր** 8 Ծնվեց բնագետ-բժիշկ, գիտնական, մատենագիր Ամիրդովլաբ Ամասիացին :

(Շարունակելի)

## Լուրեր

### Իրանահայ համայնք

- Նպատակահարմարությունը բնորոշող ժողովի հաստատումով եւ հոգեւոր առաջնորդի իշխանական վճռի հիմունքով կրոնական փոքրամասնությունների արյան գինը հավասարեցվեց մուսուլմանների արյան գինին

Լուրերի կենտրոնական միավոր- Հոգեւոր առաջնորդի իշխանական վճռով կրոնական փոքրամասնությունների արյան գինը ճշտվում է մուսուլմանների արյան գինին համահավասար: Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովի նիստում քննարկվեց Իսլ. պատժառքի օրենքի 297-րդ հոդվածին կրոնական փոքրամասնությունների արյան գինի (դիե) վերաբերյալ մի կետ ավելացնելու խնդիրը, որը վաւերացվել էր Իսլ. խորհրդարանի կողմից, բայց առարկվել Պահապան խորհրդի կողմից: Ի վերջո, Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովը որոշում ընդունեց Իսլ. հեղափոխության առաջնորդի իշխանական հրահանգի համաձայն հավասարեցվի մուսուլմանների եւ ոչ մուսուլմանների արյան գինը: 1991 թ. վավերացված Իսլ. պատժառքի օրենքի 297-րդ հոդվածին մի կետ ավելացնելու նախագիծը 2002 թ. նոյեմբերի 3-ին քննարկվեց Իսլ. խորհրդարանում եւ հաստատվեց, սակայն Պահապան խորհուրդը դա դեմ էր համարել կրոնական սկզբունքներին եւ կրկին հղել խորհրդարանին, որով պատգամավորները 2003-ի մարտի 16-ին բարեփոխեցին դա՛ Պահապան խորհրդին բավարարելու նպատակով: Նշելի է, թէ կրոնական փոքրամասնությունների արյան գնի հավասարեցման նախագիծը, որ երկու անգամ Պահապան խորհրդի հակառակությամբ էր դեմ առել, Իսլ. խորհրդարանի Իրավական եւ դատական հանձնաժողովի կողմից հաստատվելով վերջնական որոշման համար ժամանակին յղել էր Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովին:

- Ձեյթուն քաղաքամասը օժտվեց նորակառույց տղայոց ուղեցույց «Մարիամյան» դպրոցով

Թեհրանի Ձեյթուն (Մաջիդիե) հայաիւոծ քաղաքամասը օժտվեց նորակառույց «Մարիամյան» տղայոց ուղեցույց դպրոցով, որը իր մեջ ընդունելու է մեր մատաղ սերունդից շուրջ 200 աշակերտներ ի:

Դպրոցի հանդիսավոր բացումը կատարվեց հինգշաբթի դեկտեմբերի 11-ի երեկոյան Թեհրանի հայոց կլիիկյան թեմի



առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանի ձեռամբ: Հանուն կրթական խորհրդի իր ողջույնի խոսքը ասաց Նորայր Մեիրաբյանը եւ իր գոհունակությունը հայտնեց, որ հիշյալ քաղաքամասում շատ կարճ ժամանակամիջոցում բացումն է կատարվել երկու «Շանթ» եւ «Մարիամյան» դպրոցների:

Թ.Հ.Թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Այրա Յովհաննիսեանը իր գնահատանքի խոսքը ուղղեց բոլոր նրանց, որոնց նվիրատվությամբ իրականացավ դպրոցի կառուցումը, հատկապես վեց թաղայիններ՝ Խոսրով Ավասափյանին, Սայադ Ապրահամյանին, Թահեր Միրզա Թորոսյանին, Սեդրակ Աբեդիին, Ջամշիդ Նազարյանին եւ Հայկազ Մեսրոպյանին, որոնց միջոցով դպրոցի կալվածագիրը փոխանցվել է ազգային իշխանությանը եւ հիշյալ 6 հոգու անունով է գրված դպրոցի կալվածագիրը:

# Իրան

- **Իրանի Բան քաղաքում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով, ըստ նախնական տվյալների, զոհվել է մոտ 40 հազար մարդ**

ԹԵՀՐԱՆ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի Բան քաղաքում Դեկտեմբերի 26-ի առավոտյան տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով, ըստ նախնական տվյալների, զոհվել է մոտ 40 հազար մարդ:

6,3 բալ ուժգնության երկրաշարժն այստեղ տեղի է ունեցել լուսաբացին, երբ 200 հազար բնակչություն ունեցող քաղաքի բնակիչները քնած էին: Դրա հետևանքով ավերվել է բնակելի տարածքների ավելի քան 60 տոկոսը: Փլատակների տակ հազարավոր մարդիկ են մնացել: Ինչպես հաղորդել է Թեհրանի ռադիոն, քաղաքում ղեկավարված է տեղաշարժվում այստեղ բերված տեխնիկան, քանդվել է երկու կամուրջ, չի գործում հեռախոսային կապը, դադարեցված է էլեկտրաէներգիայի մատակարարումը: Իրանի հարեւան շրջաններից ավելի ու ավելի մեծ թվով փրկարարներ ու կամավորներ են գալիս աղետյալ շրջան:

Տեղական ժամանակով առավոտյան ժամը 7-ին 5,3 բալ ուժգնության ստորգետնյա ցնցումներ են գրգռել նաև Ջիրոֆտ քաղաքի բնակիչները: Այն գտնվում է Բան քաղաքից հարավ ընկած շրջանում: Առավոտյան 4 բալ ուժգնության եւս մի երկրաշարժ է տեղի ունեցել Խուզահատանի նահանգի Մեսջեդե-Մուլեյմանի քաղաքի արվարձանում: Չոհերի եւ ավերածությունների մասին առայժմ հաղորդումներ չկան:

- **Հայ փրկարարները մասնակցում են Իրանի երկրաշարժից տուժած բնակավայրերում որոնողական աշխատանքներին**

ԵՐԵՎԱՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ : ՀՀ

կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ճգնաժամերի կառավարման կենտրոնում այսօր ուղիղ կապ հաստատվեց Իրանի Իսլամական



Հանրապետություն մեկնած հայ փրկարարների հետ: Կենտրոնի հետ կապ է հաստատել ԱԻՎ լրատվական կենտրոնի պետ, գնդապետ Արամ Մովսիսյանը՝ տեղեկացնելով, որ մեր փրկարարական խումբը բարեհաջող տեղ է հասել: Ըստ ԱԻՎ մամուլի պատասխանատու Նիկոլայ Գրիգորյանի, ՀՀ կառավարությունը ցավակցական ուղերձ հղելով Իրանին, փրկարար խումբ ուղարկելու պատրաստակամություն էր հայտնել: Իրանի կառավարությունից ղեկոնկարների 26-ին ստացվել է հայ փրկարարների աջակցության վերաբերյալ համաձայնություն եւ նույն երեկ փրկարարները մեկնել են Իրան: Ի տարբերություն այլ երկրներից ժամանող խմբերի, որոնք տրանսպորտի բացակայության պատճառով չէին կարողանում տեղ հասնել, Հայաստանից մեկնած փրկարարները նույն երեկ հասել են աղետի գոտի Բան քաղաք, մասնակցել խորհրդակցությանը եւ ստացել իրենց աշխատանքի տեղամասերը երեք շենքային հատված:

Հայ փրկարարական խմբի պետ Սերգեյ Ազարյանը տեղեկացրել է, որ մեր փրկարարներին չի հաջողվել կենդանի մարդ հայտնաբերել: Ըստ Ն. Գրիգորյանի, հիմն արդեն կենդանի մարդ հայտնաբերելու հավանականությունը քիչ է «սակայն մենք մեր փորձից զիտենք, թե մարդկանց համար ինչ կարելուր մշանակություն ունի իրենց հարազատների մարմինները գտնելը»,- նշեց Ն. Գրիգորյանը:

Նրա խոսքերով, այս պահին մեր փրկարարներն աշխատանքային տեղամասում դեռ շարունակում են իրենց աշխատանքները: Այս պահին դեռ պարզ չէ, թե երբ կվարտվեն փրկարարական որոնողական աշխատանքները:

Նշենք, որ Հայաստանից Իրան մեկնած 33 փրկարարները հմտացած են ոչ միայն որոնողական փրկարարական աշխատանքներում, այլ նաև բժշկական

պատրաստվածություն ունեն, խմբի հետ մեկնել են նաև 4 բժիշկ: Նրանք իրենց հետ տարել են նաև մոտ 800 կգ դեղորայք, ինչպես նաև այն սարքավորումները, որոնք անհրաժեշտ են փրկարարական աշխատանքներ կազմակերպելու համար:

- **ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ**

Քերման նահանգի Բան քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից տուժածներին օգնութիւն ցուցաբերելու նպատակով ՀՀ նախագահ պրն. Ռ. Քոչարեանի կարգադրութեամբ աղետի գոտի են ուղարկւել երկու ինքնաթիռ, որոնք երկրաշարժի գոտի են տեղափոխել շուրջ 100 հոգի փրկարարներ, բժիշկներ, սէյսմոլոգներ, բժշկական սարքավորումներ, դեղորայք եւ մարդասիրական օգնութիւն: Առաջին AN 24 ինքնաթիռը ս. թ. դեկտեմբերի 28-ի առաւօտեան ժ. 4-ին վայրէջք է կատարել անմիջապէս Քերման քաղաքում, որտեղ կազմակերպւել է մարդասիրական օգնութեան բեռնաթափումը եւ տեղափոխումը Բան քաղաք: Սէկ ժամ անց երկրորդ YAK 40 ինքնաթիռը նախ լիցքավորման նպատակով վայրէջք է կատարել Սպահանում, որից յետոյ ժ. 7.35-ին ուղղութիւն է վերցրել դէպի Քերման քաղաքի օդանավակայան:

Ողբերգութեան առիթով ցուակցական հեռագրեր են յղւել ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԳ նախարարի եւ այլոց կողմից: Նախագահ Ռ. Քոչարեանի կարգադրութեամբ Իրանի աղետալներին օգնութիւն ցուցաբերելու աշխատանքները համադրում է ՀՀ ԱԳ նախարար պրն. Կարդան Օսկանեանը:

Հայաստանից ցուցաբերուող օգնութիւնները համադրելու նպատակով ԻԻՀ-ում ՀՀ դեսպան պրն. Գ. Ղարիբջանեանի զխաւորութեամբ գործում է շուրջօրեայ հեթապահութիւն, որը մշտական կապի մէջ է ԻԻՀ ԱԳ-ում այդ նպատակով ստեղծւած շտաբի, «Կարմիր մահիկ» կազմակերպութեան, Թեհրանի, Սպահանի եւ Քերմանի օդանավակայանների հետ: Դեսպանութեան դիւանագիտական անձնակազմը կամաւոր հիմունքներով դրնորական արիւն է տւել երկրաշարժից տուժած վիրաւորներին ներարկելու նպատակով:

ԻԻՀ-ՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ, 28.12.03

## Հայաստան

- **Հունանյանները, Գրիգորյանը, Գալստյանը, Բեջանյանը, Կնյազյանը դատապարտվեցին ցմահ, իսկ Ստեփանյանը 14 տարվա ազատազրկման**

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայրաքաղաքի Կենտրոն եւ Նորքեմարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Ուզունյանն այսօր հրապարակեց «Հոկտեմբերի 27»-ի քրեական գործով դատավճիռը:

Դատարանը, ապացուցված համարելով ամբաստանյալների մեղքը, վճռեց Նաիրի եւ Կարեն Հունանյաններին, եղիկ Գրիգորյանին, Դերենիկ Բեջանյանին, Վռան Գալստյանին, Աշոտ Կնյազյանին դատապարտել ցմահ, իսկ Համլետ Ստեփանյանին՝ 14 տարվա ազատազրկման: Ամբաստանյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցը դատարանը վճռեց թողնել անփոփոխ, պատժի ժամկետը համարել ձերբակալման օրվանից:

Դատարանը նախաքննական մարմնի առաջադրած մեղադրանքները դատավճռով համապատասխանեցրեց այս տարվա օգոստոսի 1-ից գործողության մեջ մտած նոր քրեական օրենսգրքի դրույթներին: Ըստ որի, ամբաստանյալներին մեղավոր ճանաչեց պետական իշխանությունը յուրացնելու, ահաբեկչության, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության, ահաբեկչության հանցափորձի, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցափորձի, գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, ազատությունից ապօրինի զրկելու, ապօրինի զենք, զինամթերք պահելու հոդվածներով:

Դատավճռով ամբաստանյալներից կրճազանծվի 9 մլն 789. 565 դրամ, իրեղեն ապացույցները կմնան քրեական գործում:

Հիշեցնենք, որ դատարանը խորհրդակցական սենյակ հեռացավ նոյեմբերի 14-ին:

1999 թ. Աժ միաստերի դահլիճում տեղի ունեցած ոճրագործությանը զոհ գնացին վարչապետ Վազգեն Սարգսյանը, Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանը, Աժ փոխխոսնակներ Յուրի Բախչյանը, Ռուբեն Սիրոյանը, պատգամավորներ Զենրիկ Աբրահամյանը, Սիբայել Քոթանյանը, Արմենակ Արմենակյանը, կառավարության օպերատիվ հարցերով նախարար Լեոնարդ Պետրոսյանը:

Դատավարությունը սկսվել էր 2001 թ. փետրվարի 15-ին, եւ այս ընթացքում կայացել է 297 նիստ: Քր. գործով կար 91 տուժող, 8 իրավահաջորդ, 123 վկա, իսկ Աժ շենքին հասցված նյութական վնասը կազմում է 9 մլն 789.565 դրամ:

Դատավճիռը կարող է բողոքարկվել 33 քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանում 15 օրվա ընթացքում: Զննչային ժամկետում դատավճիռը կտրամադրվի ամբաստանյալներին եւ դատավարության մյուս մասնակիցներին: Այն նաեւ ամբողջությամբ կհրապարակվի մամուլում:

Մեղադրող Գ. Ավետիսյանը, դատավճիռի հրապարակումից հետո պատասխանելով Արմենարեսի թղթակցի հարցին, հայտնեց, որ դատավճիռը բավարարում է մեղադրող կողմին: Նկատենք, որ ամբաստանյալ Ա. Կնյազյանի համար մեղադրողները միջնորդել էին 15 տարվա ազատազրկում, մինչդեռ դատարանն ավելի խիստ պատիժ սահմանեց ցմահ ազատազրկում: Տուժող, 33 տրամապորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, պատասխանելով Արմենարեսի թղթակցի հարցին արդյոք զոհ է դատավճիռից, նշեց, որ ինքը միջնորդել էր գնդակահարություն մեղադրյալների համար, մինչդեռ օրենքով ամենախիստ պատիժը ցմահ բանտարկությունն է:

• ՑՄԱՅ ԱՋԱՏԱԶՐԿՈՒՄ ՆԵՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Երեկ ավարտվեց «Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարությունը: Հայտնի է, որ նույնների սկզբին Աժն ընդունեց քր. օրենսգրքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, որի էությունն առանց ներկան իրավունքի ցմահ ազատազրկում սահմանելն էր: Սակայն 33 նախագահն օրենքը ստորագրեց այն ժամանակ, երբ դատավորն այլևս հնարավորություն չուներ դատավճիռի մեջ ներառելու այդ կարելու փոփոխությունը: Արդյոք օրենքը գործողության մեջ մտնելու ժամկետի ձգձգումը դիտավորություն չէ՞ր: Լրագրողի այս հարցին Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանը պատասխանեց. «Օրենքը ստորագրվել է սահմանված 21և՛օրյա ժամկետում, եւ բնականաբար, հանրապետության նախագահի բացառիկ իրավունքն է, թե որ օրը կստորագրի այդ օրենքը: Օրենքի որեւէ խախտում չի եղել»:

Նույն հարցի վերաբերյալ Աժ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանի մեկնաբանությունն ավելի որոշակի էր. «Մահապատժի վերացումը դիտվում է մեղմացնող նորմ եւ տարածվում է բոլոր կալանավորների վրա: Դրանից հետո կիրառվեց խստացնող նորմ, այսինքն արգելվում է 20 տարի անց բողոքարկման իրավունքը: Քանի որ «Հոկտեմբերի 27»-ի հեղինակները հանցանքը գործել են վաղուց, նրանց վրա խստացնող նորմը չի տարածվում, հետադարձ ուժ չունի. անկախ այն բանից, ե՞րբ է ստորագրվել օրենքը, ստորագրվել է, թե՛ ոչ, հոկտեմբերի 27-ի դատավճիռը առաջ է եղել, թե՛ հետո»: Վ. Հովհաննիսյանն, այնուամենայնիվ, բացառեց, որ կատարվածը վիճարկելի իրողություն է եւ տարբեր մեկնաբանությունների կարող է արժանանալ:

• Խորհրդարանն ընդունեց «ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը

Երեւան, 25 դեկտեմբերի, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Այսօր գումարված Աժ արտահերթ նստաշրջանի ավարտին խորհրդարանը 96 կողմ, 6 դեմ, առանց ձեռնպահ ձայների ընդունեց «ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը: 33 ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը նախագծի վերջնական տարբերակը ներկայացնելիս նշեց, որ պատգամավորների կողմից 214 առաջարկություն է արվել, որոնց 55 տոկոսը կամ 117 առաջարկությունն ընդունվել է:

Ըստ նախարարի, հարցադրումների հիմնական մասը վերաբերել է տարբեր նպատակների ֆինանսավորման համար հատկացումների նախատեսմանը կամ դրանց գումարների ավելացմանը: Ըստ այդ առաջարկների, լրացուցիչ ծախսերի ծավալը շուրջ 14.9 մլրդ դրամ կկազմեր:



Պատգամավորների առաջարկությունների շրջանակներում, ըստ նախարարի, կառավարությունն ընդունելի է համարել բյուջետային հատկացումների շուրջ 2.35 մլրդ դրամ ավելացումը: Դրանք մասնավորապես ավելացել են սոցիալ-մշակութային բնագավառում 0.98 մլրդ դրամ, տնտեսության ճյուղերում 0.52 մլրդ դրամ, պետական կառավարման բնագավառում 0.38 մլրդ դրամ, այլ ոլորտներում 0.47 մլրդ դրամ: Կառավարությունն իր նախածեռնությամբ առաջարկում է 4.67 մլրդ դրամի ծախսերի ավելացում:

Այսպիսով, 2004թ. պետբյուջեի նախագծի վերջնական տարբերակով ծախսերի ընդհանուր ծավալը սահմանվում է 317 մլրդ դրամ, նախնական տարբերակի 311.5 մլրդ դրամի փոխարեն: Վ. Խաչատրյանի պարզաբանմամբ, բյուջետային ծախսերի ծավալային ավելացումը հնարավոր է եղել եկամուտների եւ պաշտոնական տրանսֆերտների գծով, ինչպես նաեւ պետական արժեթղթերի տեղաբաշխումից լրացուցիչ 7.13 մլրդ դրամ մուտքերի նախատեսման շնորհիվ: Մասնավորապես, միջազգային կազմակերպությունների կողմից 2004թ. տրամադրվելիք նպատակային դրամաշնորհային միջոցներից 3.14 մլրդ դրամ, պետական արժեթղթերի գծով 2.1 մլրդ, ընթացիկ եկամուտների գծով 1.45 մլրդ դրամ:

2004թ. եկամուտների ընդհանուր ծավալն առաջարկվում է սահմանել 274.1 մլրդ դրամ նախնական տարբերակի 269.1 մլրդ դրամի փոխարեն: Դեֆիցիտն ավելացել է 0.5 մլրդ դրամով եւ ծրագրավորվել է 42.9 մլրդ դրամ, որի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 2.53 տոկոս՝ նախնական տարբերակի 2.5 տոկոսի դիմաց:

Նախագծի վերաբերյալ իրենց դրական տեսակետները ներկայացրեցին ՄԱԿ խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանը եւ կալվիցիոն ուժերի խմբակցությունների ներկայացուցիչները: Եզրափակիչ ելույթում 33 վարչապետ Անդրանիկ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց խորհրդարանականներին ակտիվ մասնակցության եւ կառավարության հետ համատեղ աշխատելու համար: «Սրանով երեւաց կալվիցիայի միասնությունը եւ այն, որ խնդիրների նկատմամբ ունենք ընդհանուր մոտեցումներ: Եւ եթե անգամ որոշակի հարցեր եղել են, ապա պարզաբանումների ընթացքում հստակեցվել են, եւ կարողացել ենք զալ ընդհանուր եզրակացությանը, - ասաց վարչապետը:

Նա մեկ անգամ եւս նշեց, որ 2004թ. բյուջեն էապես տարբերվում է նախորդ տարիների բյուջեներից, որովհետեւ կազմված է նախապես ընդունված ռազմավարական ծրագրերի ԱՀՌՕ-ի, միջամտման կետ ծախսային ծրագրի, կառավարության գործունեության ծրագրի հիման վրա: «Այսինքն այս բյուջեով մենք հիմք դրեցինք մինչեւ 2015 թվականը ձգվող ԱՀՌՕ-ի իրագործմանը, եւ հուսով եմ, որ համատեղ ուժերով, Աժ-ի հետ միասին, ի վիճակի կլինենք այդ ծրագիրը մեզ բաժին հասած տարիների ընթացքում իրագործել»:


Ա. Սարգսյանը նկատեց, որ առաջարկություններն ու ցանկություններն ավելի շատ են, քան եղած հնարավորությունները: «Կառավարությունը փորձեց կալվիցիոն ուժերի խմբակցությունների հետ միասին գտնել այն իրական ուղին եւ այն խնդիրները, որ հնարավորություն ունենք 2004թ. լուծելու, եւ դա արտացոլվեց բյուջեի նախագծում: Վստահ եմ, որ որքան էլ կազմի եկամտային մասը, կառավարությունը հնարավորություն կունենա դա իրագործելու՝ միաժամանակ թույլ չտալով պետական պաշտոնյաների կողմից որեւէ ոտնձգություն մասնավոր սեկտորի նկատմամբ, որպեսզի վարչական միջոցներն ուղղված չլինեն ՓՄՁ-ների զարգացման դեմ: Իսկ 35 մլրդ դրամ ավելացումը եկամտային մասում ավելի շատ

վերաբերում է այն ոլորտներին, որոնք մինչ այժմ ոչ անբողոքությամբ են հարկման դաշտում»:  
Ա. Մարգարյանը նշեց, որ սոցիալապես անապահով խավին ուղղված ծրագրերը եւ բյուջետային ավելացումները շարունակական են լինելու: «Այն գումարները, որ ուղղորդել ենք սոցիալական ոլորտին, ցույց են տալիս մեր պետության եւ կառավարության սոցիալական խնդիրները լուծելու վճռականությունը»: Նշենք, որ նախագծին դեմ էին քվեարկել «Արդարություն» խմբակցության նիստին ներկա պատգամավորները եւ «Ազգային միաբանությունից» միակ ներկա պատգամավոր Գագիկ Կոստանյանը:

## Հայոց Սիյուռք

• **ՌԵՅՄՈՆԳ ՏԱՄԱՏՅԱՆԻ «ՍՓՈՓԻՉ» ՄՐԵԱՆԱԿԸ**

Նյու Յորքում բնակվող հայտնի բժիշկ եւ գյուտարար Ռեյմոնդ Տամատյանը, որը մագնիսառեզոցմանսային տոմոգրաֆիայի (նկարահանման) գյուտարարներից մեկն է, սակայն այս տարի չարժանացավ Նոբելյան հանձնախմբի մրցանակին, ստացել է մեկ ուրիշ գիտական մրցանակ, որը կարելի է «սփոփիչ» անվանել: Բրիտանական «Նեյշըր» հանդեսը հաղորդում է, որ Շվեդիայի Օռնկոլսպիկ քաղաքի «Իդե ֆորում» գիտական ընկերության ներկայացուցիչները հենց Նոբելյան մրցանակների հանձնման օրը դեկտեմբերի 10-ին թռել են Նյու Յորք եւ Տամատյանին ոսկե մեդալ հանձնել բժշկության բնագավառում նրա ձեռքբերումների համար:



«Դա, իհարկե, Նոբելյան մրցանակ չէ, բայց նրանց կողմից մեծ սիրալիրություն էր ինձ մրցանակ հանձնելը», հայտարարել է Տամատյանը: Հիշեցնենք, որ բժշկության է բնախտության գծով 2003 թ. Նոբելյան մրցանակի շնորհվեց ամերիկացի Փոլ Լոթերբուրգին եւ բրիտանացի Փիթեր Մենսֆիլդին՝ մագնիսառեզոցմանսային տոմոգրաֆիայի մեթոդի հայտնագործման համար: Այդ եղանակը թույլ է տալիս առանց վիրահատական միջամտության եւ վնասակար ճառագայթման հետազոտել մարդու ներքին օրգաններն ու հյուսվածքները:

Տամատյանի կարծիքով, Լոթերբուրգի եւ Մենսֆիլդի աշխատանքը կառուցվել է իր արտոնագրած հիմնարար հայտնագործության վրա: Բժշկության ասպարեզում 2003 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիրների անունների հրապարակումից հետո Տամատյանը ՁԼՍԱՆԵՐԻ միջոցով Լոթերբուրգից եւ Մենսֆիլդից պահանջել էր ուղղել անարդարությունը եւ իր հետ կիսել մրցանակը:

Ի դեպ, Նոբելյան մրցանակի շնորհման կանոններն արգելում են փոփոխել անվանակարգիչ հանձնաժողովի որոշումները:  
Պ. ք

## Սիջազգային

• **ՇԿԵՅԱՐԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԸՆԴՆՈՒՄԵՆ ԳՆԱՏՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՏՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՏՅՈՒՆՆԵՐԻ**

Դեկտեմբերի 15-ին Շվեյցարիայի Ազգային խորհուրդը 107 կողմ, 67 դեմ եւ 11 ձեռնպահ (15 բացակա) ձայների հարաբերակցությամբ ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձեռը:

Տեքստի նախաբանում նշված է, որ Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչում է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը եւ խնդրում Դաշնային խորհրդին Շվեյցարիայի կառավարությանը, սույն դիրքորոշումը փոխանցել դիվանագիտական խողովակներով:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում իշխանությունների հրամանով տեղահանման եւ քարոզերի միջոցով մեկ միլիոնից ավելի հայերի բնաջնջումը անհերքելի

փաստեր են իրենց նշանակությամբ թե ծավալով եւ հիմք են ծառայել Ցեղասպանության հասկացության սահմանման համար, ասվում է բանաձեռի մեջ:

Հայոց Ցեղասպանության ճանաչմամբ Շվեյցարիան արժանին է մատուցում զոհերին, փրկվածներին եւ նրանց ժառանգներին, ինչպես նաեւ նպաստում մարդկության դեմ այլ ոճիրների կանխարգելմանը, ասվում է բանաձեռի մեջ:

Ընդունելով սույն բանաձեռը՝ Ազգային խորհուրդը փափագում է նպաստել թուրքերի եւ հայերի միջեւ տեւական խաղաղության հաստատմանը, որ կարող է ձեռք բերվել պատմական ճշմարտության հանդեպ ընդհանուր հայացքով, ասվում է բանաձեռի մեջ:

1999-2003 թթ. շրջանառության մեջ գտնվող բանաձեռի տեքստի հեղինակն է քրիստոնեաների մոկրատ ժանկար Կոլդրոն, նորընտիր Ազգային խորհրդում համահեղինակ դարձավ վերջինիս կուսակից Դոմինիկ Բուսանը:

ՀՀ արտգործնախարարության մամուլի վարչություն

## ՅՈՒՆԱՍԱՆԻ ԹԵՄԻ ԵՐԿՓԵՂԿՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱՑՆԵԼ ԱՆՅԱՊԱՂ

Ընդամենը երեք շաբաթ առաջ կը վախճաներ Յունաստանի Անթիլիասական թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սահակ Արք. Այվազեանը: Անձնական յատկանիշներով համակրելի, երաժշտագետ հոգեւորական մը, որուն արժանիքներն մեկն ալ իր մտերմական գրոյցներուն ընթացքին արտայայտած ցան էր 1958 թուականն ի վեր մեր գաղութին եւ ընդհանրապէս Հայ եկեղեցւոյ կեանքին մէջ շարունակուող երկփեղկուածութեան մասին: Սրբազանը, ինչպէս իւրաքանչիւր հայ մարդ, մանաւանդ հաւատաւոր իւրաքանչիւր հայ եկեղեցական, վստահաբար ներքնապէս կը տառապէր տեսնելով, ամեն օր բախելով այն ժխտական երեւոյթներուն, որոնք տասնամեակներ շարունակ պառակտուած վիճակի մէջ կը պահեն յունահայութիւնը, կը ջլատեն մեր ուժերը, մեզ կը շղեւն հայրենակեդրոն եւ էջմիածնակեդրոն մեր երկրներն:

Յամենայն դէպս, բոլորս ալ գիտենք ու կը զգանք այն անհեթեթ կացութիւնը, որուն մատուած է մեր գաղութը եւ ընդհանրապէս Հայ եկեղեցին: Աշխարհը փոխուած է, վաղուց աւարտած է Ցուրտ պատերազմը, մեր մայր հայրենիքը ձեռք բերած է անկախութիւն եւ 12 տարիներ է ի վեր քայլ առ քայլ կը յաղթահարէ իր եւ մեր բոլորին առջեւ ծառացած դժուարին խնդիրները: Զուգահեռաբար, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնը ստանձնած է բովանդակ իր հօտին, ի Հայաստան, յկրցաւ եւ ի Սփիւռս աշխարհի ամբողջականօրէն ծառայելու, հովուելու առաքելութիւնը: Հետեւաբար այս կացութեան մէջ ժամանակավրէպ, ինքնամպատակ է շարունակել «աշխարհաքաղաքական պայմաններով» պատճառաբանել ստեղծուած կացութիւնը եւ կամ «Անթիլիասը մենք կը զօրացնենք էջմիածնի համար» ինքնախաբէական կարգախօսը: Ստեղծուած տխուր իրավիճակի շարունակումն ուրիշ բան չէ, եթէ ոչ կուսակցական նկրտում, որ նոյնպէս անհիմաստ է այսօր, երբ նոյն կուսակցութիւնն այլեւս լիիրաւ մաս կը կազմէ Հայաստանի պետական իշխանութիւններուն, հետեւաբար պէտք է նախանձախնդիր ըլլայ նաեւ Մայր աթոռի հեղինակութեան ամրապնդումին, հայ ժողովրդի կեանքին մէջ կարգուկանոնի վերահաստատումին:

Արդ, հաւատացած ենք, որ Սահակ Սրբազանի վախճանումն էտք Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւ առաջին հերթին յունահայ գաղութին Անթիլիասական թեւ կրնան կորովի քայլ մը կատարել եւ ի խնդիր մեր գաղութի միասնականութեան եւ եկեղեցականութեան կարգուկանոնի վերահաստատման, վերջ տալ յունահայութեան թեմական բաժանմանին՝ գայն վերադարձնելով Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հոգեւոր գերագոյն իշխանութեան ծիր:

Յիսնամեայ տագնապը պէտք է լուծել այսօր, եթէ ունինք կամք եւ կորով ազգային միասնականութիւնը վերականգնելու:

ՈՍԿ ՅՈՒՆԱՍԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



-Այո՛, բայց գեները քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են: Եկ, նախ քեզ կապեն, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ ամեն ինչ գեները եւ ապա կովենք:

Առյուծն ասաց.  
-Երդվիր, որ կը գաս, եւ ես կը լսեմ քեզ:  
Սարդն երդվեց, եւ առյուծն ասաց.  
-Հիմա կապիր ինձ եւ առյուծին պինդ կապով կապես կաղնու ծառին եւ ծառից կտրեց մի բիր եւ սկսեց զարկել առյուծին:

Եւ առյուծը գոչեց.  
-Եթե դու նարդ ես, ավելի խիստ եւ անխնա զարկիր իմ կողերին, որովհետեւ այս խելքին այդպես է վայել:

**30.Մուկը եւ ուղտը**

Մի մուկ հպարտացավ: Կորավ նրա իմաստությունը, եւ նրա սիրտը լցվեց հպարտությամբ: Մուկը գնաց ուղտի մօտ եւ ասաց ուղտին.

-Ինձ հրաման տուր քո կծղակի մեջ բուն դնեմ եւ այնտեղ բնակվեմ:

Եւ ուղտն ասաց.  
-Քեզ վնաս կը լինի, որովհետեւ հանկարծ կոխ կը տամ քեզ եւ կը մեռնես:

Մուկն ասաց.  
-Քո սննդակը կակուղ է եւ ինձ վնաս չի լինի:  
Ուղտն ասաց.  
-Քո արյունը քո գլուխը:

Եւ մուկն ուղտի կծղակի մեջ շինեց իր բունը: Մի անգամ ուղտը ծանր բեռան տակ քայլեց եւ հանկարծակի կոխավեց մուկին: Եւ մուկը ճչաց եւ նրա փորից դուրս եկավ ճրագուն, որովհետեւ մուկը գեր էր:

Այդ տեսնելով ուղտն ասաց.  
-Ահա եղբայր, հենց այդ էր նեղում քեզ, որ դուրս ելավ քո փորից:

**ԸԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ**

- Ժամանակը ոսկի է:
- Ժամից ես եմ գալիս, «ողորմի աստված» ինքն է տալիս:
- Ժողովուրդը քնած առյուծ է, որ արթնացավ էլ չի քնի:
- Ժողովրդի ծայրը թողանոթի ծայրից ուժեղ է:
- Իմ բանն աջ է, ով ուզում է թող հաչե:
- Ինչ աղբրից որ ջուր ես խմում, էն աղբրին քար մի գցի:
- Ինչ որ բողբոս, այն կխրթես:
- Ինչ չէր տեսել պատից կախ, տեսավ ճակտից կախ:
- Ինչքան գետնի երեսն է, յոթ այնքան գետնի տակն է:
- Ինքը չկա թիզ ու կես, արարմունքը գազ ու կես:
- Իր աչքի գերանը չի տեսնում, ուրիշի մազը տեսնում է:

**ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ**

- Նրան գյուղ չեն թողնում, տանուտերի տունն է հարցնում:
- Շան անունը տուր, փայտը ձեռքդ առ:
- Շան հաչոցը մուրացկանին օգուտ է:
- Շատ գիտես, քիչ խոսիր:
- Շունը տիրոջ տանն առյուծ է:
- Ոչ ոք իր թանին թուլ չի ասի:
- Ոսկի ունես, բոլորը քո եղբայրները կլինեն:
- Ով է՛շ, մենք փախան:
- Ով է՛ըր կտուրն է բարձրացնում, նա էլ նրան ցած կիջեցնի:
- Ով հարեւանի ընթրիքի հույսին է, սոված կքնի:

**Ժամանց**

**1- Ուրախ անկյուն**

**ԹՈՂ ԷՂ ԺԱՄԻՆ ԽՈՐՈՒ**  
Վարդանիկը խնդրում է մորը.  
- Մա, ժամը վեցին ընձի ձեռն կուտաս...  
- Հորդը ըսա, թող էդ ժամին խռռա, որ զարթնիս:\*\*\*

**ՄԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑ**

- Վարդանիկ, կարո՞ղ ես ասել, ինչ բան է կապը:
- Չգիտեմ:
- Իսկ ի՞նչ բան է շաղկապը:
- Լավ, մի վերջին հարց քեզ երկուս ստանալուց փրկելու համար, ասա ի՞նչ տարբերություն կա կապի ու շաղկապի միջե:

**ԵՎԱ ԵՐԿՈՒ ՀԱՐՑ**

- Վարդանիկ, կայծակը ինչպիսի՞ գոյական է:
- Սարսափելի գոյական է:

- Իսկ հավը՞:  
- Հավը ածական է: \*\*\*

**2ՀԱՎԱՍԱՍ**

- Վարդանիկ, մեկին գումարած ութ ինչի՞ է հավասար:
- Տասի:
- Այ տղա ութ խնձոր դու ունես, մի հատ էլ որ Աշոտիկը տա, քանի՞սը կունենաս:
- Չհավատաս, որ Աշոտիկը ինձ խնձոր տա:\*\*\*

**ԿԱՍԿԱԾԵՑ**

- Փոքրիկ Վարդանիկը դիմում է հորը.
- Պա, չամիչը ոտ ունի՞:
- Լակոտ, էլի բոլոջ ես կերե:

**2- Արդյոք գիտե՞ք**

Տաւարի միսը արագ կը եփի, եթէ նախօրոք ծեծեք փայտէ մուրձով կամ կացինով եւ ջրին աւելացնէք 1-2 ճառաչի քացախ: \*\*\*

Որպէսզի տապակած փոզի միսը համով եւ կարմիր լինի, հարկաւոր է նախօրոք նրա մակերեսային սուր դանակով մի քանի խոր կտրուածքներ (ճեղքածք) անել:\*\*\*

Որպէսզի թոչնամիսը արագ եփի, հարկաւոր է նրան դրսից եւ ներսից լիմոն քսել:

**3.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

- 1-Չուրն է ընկնում՝ թաց չի լինում,
- Ծեծ է ուտում՝ լաց չի լինում:
- 2-Թե շուռ տաս՝ չի շրջվի,
- Ջրի մեջ չի թրջվի,
- Քանու հետ չի տարվի նա,
- Հրի մեջ չի այրվի նա:
- 3- Ոնց էլ նրան տորոբես,
- Ոնց էլ նրան գլորես,
- Քեզ հետ է միշտ,
- Քո կողքին՝
- Անվիշտ, անխոս, անհոգի:
- 4-Երկար պարան՝ սովեր չունի,
- Ծնվել ունի, սնվել չունի:
- 5-Կիրճերի մեջ,
- Սարում, փոսում,
- Ոչ քայլում է,
- Ոչ էլ հոսում,
- Ինչ լեզվով էլ դիմես նրան,
- Նույն լեզվով էլ հետդ խոսում:

Պատասխան.1-Սովեր 2- Սովեր 3- Սովեր 4- Չայն 5- Արծազանք

**Առողջապահական**

**ԺՐՈՂՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՍՄԵՐ**

Ատամնացավը մեղմելու համար եռացնել եղեսպակի կանաչը եւ գոլ եփուկով ողողել բերանը: Ողողելու ընթացքում աշխատել գոլ եփուկը հեռու պահել ցավող ատամից: Բուժման այս գործողությունը կրկնել կես ժամում՝ 3-4 անգամ: \*\*\*

Վերցնել մի փոքր կտոր խոզի ճարպ եւ դնել ցավող ատամի վրա՝ այտի ու լնդի միջե: 15-20 րոպե հետո, ցավը կդադարի: \*\*\*

Ցավող ատամի վրա դնել ջրախոտի (եզան լեզու) արմատը եւ պահել մոտ կես ժամ, որից հետո ցավը կդադարի:\*\*\*

Գոյություն ունի նաեւ ատամնացավն անցկացնելու (մեր տեսակետից չափազանց տարօրինակ) մեկ այլ բուժամիջոց: Մանր կտրված սխտոր դնել ցավող ատամի հակառակ կողմի վրա գտնվող ձեռքի զարկերակի վրա եւ վիրակապով փաթաթել: Ձեռքի եւ սխտորի միջե անհրաժեշտ է դնել անձեռոցիկ կամ մառլյա: Աճկախ այս բուժամիջոցից տարօրինակությունը՝ այն օգնում է մեղմել ատամնացավը:\*\*\*

Գլխացավը բուժելու համար առաջարկվում է լիմոնի կեղեր ներսի կողմով սեղմել բունքերին: Որոշ ժամանակ անց կեղեւի սեղմված տեղում առաջանում է քոր բերող կարմրավուն բծեր եւ գլխացավը հանդարտվում է: